

Ժողովրդեանն այնմիկ: Արպէս ի սկզբան ամի կա-  
 թուղիկոսութեանդ յորժամ հասիր ի Ապահանայ  
 Թարվէզ եւ երկրորդում աւուր երեկոյեան ժա-  
 մուն ի մէջ եկեղեցւոյ սկսար հայհոյութեամբք  
 քարոզդ ընդդէմ կաթուղիկէ եկեղեցւոյն քրիս-  
 տոսի, եւ դարձուցանելով բանդ առ ժողովուրդս  
 վասն նոյն պատրի քափուչինացն, թէ լուեալ եմ  
 զի անմեղ գառինս ձեր տանիք եւ տայք ի ծըծել  
 զստինս շանց (այսինքն մանկունս ձեր տայք ի  
 կրթութիւն պատրեացն) սպառնալով քո մահ  
 սրօք պարսկաւ եթէ այլ եւս առնիցեն . . . որ-  
 պէս եւ արարեր նոյն ամի զի գրեցեր ի նոյն թիփն  
 Հայոց ուճճդ. կամ ուճճը. ի Վ. Պօլիս առ մեծ վա-  
 դիրն Օսմանցոց թէ ես Հայոց ազգին Ֆիթվայ  
 տուողն եմ եւ դոքա իմ ժողովուրդք հնազանդիլ  
 ոչ կամին ինձ, եւ ելեալ են ի կրօնից մերոց, ահա  
 ետու Ֆիթվայ զի պատժիցէք այս անուն եւ այս  
 անուն թուով իբրեւ 175 կամ 200 անձինս որք  
 Ֆուանդ են եղեալ հայքդ, որ եւ եղեւ կատարումն  
 Ֆիթվայիդ, քանզի սուրն Հերովդէի կոտորեաց  
 բազում մանկունս եկեղեցւոյ, եւ ոմանս ետուն  
 չաքդրայ, զի ի սովու եւ ի տանջանաց մեռցին նե-  
 ղութեամբ: Թող զայլ բազումս եւ հազարաց ան-  
 ձինս որք փախստականք եղեն հալածանաց եւ  
 մնացին զուրկ ի տանէ եւ ի հայրենեաց: Այլ  
 եւ կրկին սկսար աղմկել եւ ի հիմանց շրջել  
 տունս հայոց եթէ Թարվէզ եւ ի Շամախի,  
 եթէ ի Գանջայ եւ ի Թիփիլիզ, եւ այլ գաւառս  
 եւ քաղաքս որոյ ականատես ես ինքնին իսկ  
 եղէ բազմաց . . . որ դեռ եւս եմ ի պատճառս  
 նոյն հալածանաց, շրջելոյ պանդուխտ եւ օտար  
 երկրի . . . :”

Յիշեալ նամակին մէջ Աղեքսանդր Կաթու-  
 ղիկոս Հայոց իր հաւատքին դաւանութիւնը կու-  
 տայ: Ասոր մէջ չկան երկու եկեղեցիներու տար-